ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱՄ ՄՀ-ԳՀԱՊՁԲ-05/21

ք. Երևան «17» 09 2021 թ.

«Մեծամորի համայնքապետարանն», ի դեմս համայնքի ղեկավար Ռ.Գրիգորյանի, որը գործում է Մեծամորի համայնքապետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Է.Ավետիսյանի, ով գործում է «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **5** օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **5** օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **2 466 700 (երկու միլիոն չորս հարյուր վաթսունվեց հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:** Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից

...ատ և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պարանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **5** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ

համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նկատմամբ:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին: 8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 37 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Մեծամորի համայնքապետարան	«Պրոֆ Ալ» ՍՊԸ
ՀՀ Արմավիրի մարզ ք. Մեծամոր, Վարչական կենտրոն 1	Ք.Երևան, Գ1 թաղ. Հ1
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Էյչ-Էս-Բի-Սի Հայաստան» բանկ ՓԲԸ
Հ/Հ 900332239061	Հ/Հ 217-001-164342-001
ՀՎՀՀ 04402328	ՀՎՀՀ 01831375
Համայնքի ղեկավար	Գլխավոր տնօրեն
_____Ռ.Գրիգորյան	_____Է.Ավետիսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված
« » 2021թ. կնքված
ՀՀ ԱՄ ՄՀ-ԳՀԱՊՁԲ-05/21 ծածկագրով պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի								մատակարարման		
Հ/հ	CPV	անվանումը	արտադրողի անվանումը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը
1	39121200/501	Ընդունարանի սեղան	«Պրոֆ Ալ» ՍՊԸ	հատ	176 400	176 400	1	*ք. Մեծամոր, Վարչական կենտրոն 1*	1	*Պայմանագրին կից կնքվելիք համաձայնագրի կնքման օրվանից մինչև 2021թ. Սեպտեմբերի 30-ը:*
2	39121200/502	Տպիչի սեղան	«Պրոֆ Ալ» ՍՊԸ	հատ	40 800	40 800	1	*ք. Մեծամոր, Վարչական կենտրոն 1*	1	*Պայմանագրին կից կնքվելիք համաձայնագրի կնքման օրվանից մինչև 2021թ. Սեպտեմբերի 30-ը:*
3	39141100/501	2 քաշովի դարակներով մոդուլ	«Պրոֆ Ալ» ՍՊԸ	հատ	39 600	39 600	1	*ք. Մեծամոր, Վարչական կենտրոն 1*	1	*Պայմանագրին կից կնքվելիք համաձայնագրի կնքման օրվանից մինչև 2021թ. Սեպտեմբերի 30-ը:*
4	39121100/501	Գրասեղան	«Պրոֆ Ալ» ՍՊԸ	հատ	99 000	396 000	4	*ք. Մեծամոր, Վարչական կենտրոն 1*	4	*Պայմանագրին կից կնքվելիք համաձայնագրի կնքման օրվանից մինչև 2021թ. Սեպտեմբերի 30-ը:*
5	39151130/501	Համակարգչի մոդուլ	«Պրոֆ Ալ» ՍՊԸ	հատ	28 800	28 800	1	*ք. Մեծամոր, Վարչական կենտրոն 1*	1	*Պայմանագրին կից կնքվելիք համաձայնագրի կնքման օրվանից մինչև 2021թ. Սեպտեմբերի 30-ը:*
6	39151130/502	Համակարգչի և փոքր տպիչի մոդուլ	«Պրոֆ Ալ» ՍՊԸ	հատ	28 800	86 400	3	*ք. Մեծամոր, Վարչական կենտրոն 1*	3	*Պայմանագրին կից կնքվելիք համաձայնագրի կնքման օրվանից մինչև 2021թ. Սեպտեմբերի 30-ը:*
7	39141140/501	3 քաշովի դարակներով մոդուլ	«Պրոֆ Ալ» ՍՊԸ	հատ	39 600	198 000	5	*ք. Մեծամոր, Վարչական կենտրոն 1*	5	*Պայմանագրին կից կնքվելիք համաձայնագրի կնքման օրվանից մինչև 2021թ. Սեպտեմբերի 30-ը:*
8	39141260/501	Հագուստի պահարան	«Պրոֆ Ալ» ՍՊԸ	հատ	126 000	126 000	1	*ք. Մեծամոր, Վարչական կենտրոն 1*	1	*Պայմանագրին կից կնքվելիք համաձայնագրի կնքման օրվանից մինչև 2021թ. Սեպտեմբերի 30-ը:*
9	39132100/501	2 քաշովի	«Պրոֆ Ալ»	հատ	75 600	75 600	1	*ք. Մեծամոր, Վարչական*	1	*Պայմանագրին կից կնքվելիք համաձայնագրի կնքման*

		մոդուլ՝ փաստաթղթերի պահարան								Սեպտեմբերի 30-ը:
10	39121200/503	Սեղան փաստաթղթերի լրացման համար	«Պրոֆ Ալ» ՍՊԸ	հատ	66 000	66 000	1	ք. Մեծամոր, Վարչական կենտրոն 1	1	Պայմանագրին կից կնքվելիք համաձայնագրի կնքման օրվանից մինչև 2021թ. Սեպտեմբերի 30-ը:
11	39121200/504	Սեղան	«Պրոֆ Ալ» ՍՊԸ	հատ	30 000	30 000	1	ք. Մեծամոր, Վարչական կենտրոն 1	1	Պայմանագրին կից կնքվելիք համաձայնագրի կնքման օրվանից մինչև 2021թ. Սեպտեմբերի 30-ը:
12	39138220/501	Սպասարկողի աթոռ	«Պրոֆ Ալ» ՍՊԸ	հատ	65 000	325 000	5	ք. Մեծամոր, Վարչական կենտրոն 1	5	Պայմանագրին կից կնքվելիք համաձայնագրի կնքման օրվանից մինչև 2021թ. Սեպտեմբերի 30-ը:
13	39138220/502	Հաճախորդի աթոռ	«Պրոֆ Ալ» ՍՊԸ	հատ	18 000	72 000	4	ք. Մեծամոր, Վարչական կենտրոն 1	4	Պայմանագրին կից կնքվելիք համաձայնագրի կնքման օրվանից մինչև 2021թ. Սեպտեմբերի 30-ը:
14	39138220/503	Սպասասրահի և խորհրդատվական սեղանի աթոռ	«Պրոֆ Ալ» ՍՊԸ	հատ	25 000	125 000	5	ք. Մեծամոր, Վարչական կենտրոն 1	5	Պայմանագրին կից կնքվելիք համաձայնագրի կնքման օրվանից մինչև 2021թ. Սեպտեմբերի 30-ը:
15	39121200/505	Խորհրդատվական սեղան	«Պրոֆ Ալ» ՍՊԸ	հատ	140 000	140 000	1	ք. Մեծամոր, Վարչական կենտրոն 1	1	Պայմանագրին կից կնքվելիք համաձայնագրի կնքման օրվանից մինչև 2021թ. Սեպտեմբերի 30-ը:
16	39298300/501	Ինքնաջրվող ծաղկաման	«Պրոֆ Ալ» ՍՊԸ	հատ	20 000	120 000	6	ք. Մեծամոր, Վարչական կենտրոն 1	6	Պայմանագրին կից կնքվելիք համաձայնագրի կնքման օրվանից մինչև 2021թ. Սեպտեմբերի 30-ը:
17	39298300/502	Ծաղկաման KC3-14A25	«Պրոֆ Ալ» ՍՊԸ	հատ	11 700	11 700	1	ք. Մեծամոր, Վարչական կենտրոն 1	1	Պայմանագրին կից կնքվելիք համաձայնագրի կնքման օրվանից մինչև 2021թ. Սեպտեմբերի 30-ը:
18	39298300/503	Ծաղկաման Pottery Pots	«Պրոֆ Ալ» ՍՊԸ	հատ	25 000	50 000	2	ք. Մեծամոր, Վարչական կենտրոն 1	2	Պայմանագրին կից կնքվելիք համաձայնագրի կնքման օրվանից մինչև 2021թ. Սեպտեմբերի 30-ը:
19	39298300/504	Ծաղկաման Pottery Pots, մոդել՝ P3028-43,	«Պրոֆ Ալ» ՍՊԸ	հատ	45 000	135 000	3	ք. Մեծամոր, Վարչական կենտրոն 1	3	Պայմանագրին կից կնքվելիք համաձայնագրի կնքման օրվանից մինչև 2021թ. Սեպտեմբերի 30-ը:
20	03451100/501	Բույս՝	«Պրոֆ Ալ» ՍՊԸ	հատ	10 000	60 000	6	ք. Մեծամոր, Վարչական	6	Պայմանագրին կից կնքվելիք համաձայնագրի կնքման

		Սանսեվիերա						կենտրոն 1		օրվանից մինչև 2021թ. Սեպտեմբերի 30-ը
21	03451100/502	Բույս՝ Ագալանոմեա	«Պրոֆ Ալ» ՍՊԸ	հատ	7 200	7 200	1	ք. Մեծամոր, Վարչական կենտրոն 1	1	Պայմանագրին կից կնքվելիք համաձայնագրի կնքման օրվանից մինչև 2021թ. Սեպտեմբերի 30-ը:
22	03451100/503	Բույս՝ Ֆիկուս	«Պրոֆ Ալ» ՍՊԸ	հատ	24 000	24 000	1	ք. Մեծամոր, Վարչական կենտրոն 1	1	Պայմանագրին կից կնքվելիք համաձայնագրի կնքման օրվանից մինչև 2021թ. Սեպտեմբերի 30-ը:
23	03451100/504	Բույս՝ Կրոտոն	«Պրոֆ Ալ» ՍՊԸ	հատ	18 000	18 000	1	ք. Մեծամոր, Վարչական կենտրոն 1	1	Պայմանագրին կից կնքվելիք համաձայնագրի կնքման օրվանից մինչև 2021թ. Սեպտեմբերի 30-ը:
24	03451100/505	Բույս՝ Կալատեա	«Պրոֆ Ալ» ՍՊԸ	հատ	9 600	19 200	2	ք. Մեծամոր, Վարչական կենտրոն 1	2	Պայմանագրին կից կնքվելիք համաձայնագրի կնքման օրվանից մինչև 2021թ. Սեպտեմբերի 30-ը:
25	03451100/506	Բույս՝ Դրախտի թռչուն	«Պրոֆ Ալ» ՍՊԸ	հատ	96 000	96 000	1	ք. Մեծամոր, Վարչական կենտրոն 1	1	Պայմանագրին կից կնքվելիք համաձայնագրի կնքման օրվանից մինչև 2021թ. Սեպտեմբերի 30-ը:

Ապրանքները պետք է լինեն նոր և չօգտագործված:
Ապրանքների պատրաստման ընթացքում հիմք ընդունել գծագրերով տրված չափերից:

ԳՆՈՐԴ

Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզ ք. Մեծամոր, Վարչական կենտրոն 1
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900332239061
ՀՎՀՀ 04402328
Համայնքի ղեկավար

Ռ.Գրիգորյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Պրոֆ Ալ» ՍՊԸ
Ք.Երևան, Գ1 թաղ. Հ1
«Էյչ-Էս-Բի-Սի Հայաստան» բանկ ՓԲԸ
Հ/Հ 217-001-164342-001
ՀՎՀՀ 01831375
Գլխավոր տնօրեն

Է.Ավետիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/հ	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը
1	Ընդունարանի սեղան	Ընդունարանի սեղան 1900(L)x850(D)x1100(H) մմ: 60x20x2 մմ ուղղանկյուն մետաղական խողովակներով հիմնակմախքի գույնը՝ D1036 - RAL 9010 - Fine Texture Matt SAA10F կամ PULVER 09038.09010 (այլընտրանք), (փոշեներկված էլեկտրաստատիկ դաշտում): Սեղանաձածկերը 18 մմ հաստությամբ Egger H3331 ST10 կամ Egger H3303 ST10 (այլընտրանք) լամինատով: Մալուխների համար անցքերի մեջ՝ պլաստիկ դետալներով, մուգ մոխրագույն կամ սև: Դիմային ճակատից վերին և ստորին մասերում նախատեսված են երկշերտ մետաղական ցանցեր՝ 10x10x2 քառակուսի խողովակներով և ներկված մանր նուրբ ցանցով (2.5x5x1 մմ կամ 3x6x1 մմ): Մանրամասները ըստ գծագրի
2	Տպիչի սեղան	"Սեղանիկ մեծ տպիչի համար 1100(L)x650(D)x600(H) մմ: 60x20x2 մմ ուղղանկյուն մետաղական խողովակներով հիմնակմախքի գույնը՝ D1036 - RAL 9010 - Fine Texture Matt SAA10F կամ PULVER 09038.09010 (այլընտրանք), (փոշեներկված էլեկտրաստատիկ դաշտում): Սեղանաձածկը և կողային ճակատները 18 մմ հաստությամբ Egger H3331 ST10 կամ Egger H3303 ST10 (այլընտրանք) լամինատով: Մանրամասները ըստ գծագրի"
3	2 քաշովի դարակներով մոդուլ	2 քաշովի դարակներով մոդուլ 900(W)x600(D)x500(H) մմ: Աջ, ձախ, վերին ստորին արտաքին նիստերը 18 մմ հաստությամբ Egger W908 ST2 կամ Egger W1000 ST9 (այլընտրանք) լամինատով, իսկ դիմային և հետևի նիստերը Egger H3331 ST10 կամ Egger H3303 ST10 (այլընտրանք) լամինատով: Սողնակները՝ բարձրորակ, անիվային մեխանիզմով, BLUM կամ տեխնիկապես համարժեք ապրանքանիշ: Դարակների բռնակները վերադիր, կլոր հատվածքով, սահուն, անվնաս էրգոնիմիկ անցումներով, գաբարիտային երկարությունը՝ 156 մմ, կոդ՝ RQ104S.096BC99, Գույնը՝ սև, Վերջնամշակումը՝ խոզանակած պողպատ: 8H100 տեսակի կարգավորվող պրիզմայաձև ոտքերով, անփայլ մետաղական կանգնակ + մոխրագույն պլաստիկ ոտնատակ: Մանրամասները ըստ գծագրի
4	Գրասեղան	"Գրասեղան 1500(L)x850(D)x750(H) մմ: 60x20x2 մմ ուղղանկյուն մետաղական խողովակներով հիմնակմախքի գույնը՝ D1036 - RAL 9010 - Fine Texture Matt SAA10F կամ PULVER 09038.09010 (այլընտրանք), (փոշեներկված էլեկտրաստատիկ դաշտում): Սեղանաձածկը 18 մմ հաստությամբ Egger H3331 ST10 կամ Egger H3303 ST10 (այլընտրանք) լամինատով: Մալուխների համար անցքերի մեջ՝ պլաստիկ դետալներով, մուգ մոխրագույն կամ սև: Դիմային ճակատից նախատեսված է երկշերտ մետաղական ցանցեր՝ 10x10x2 մմ քառակուսի խողովակներով և ներկված մանր նուրբ ցանցով (2.5x5x1 մմ կամ 3x6x1 մմ): Մանրամասները ըստ գծագր"
5	Համակարգչի մոդուլ	"Համակարգչի մոդուլ 450(W)x500(D)x600(H) մմ: 20x20x2 մմ ուղղանկյուն մետաղական խողովակներով հիմնակմախքի գույնը՝ D1036 - RAL 9010 - Fine Texture Matt SAA10F կամ PULVER 09038.09010 (այլընտրանք), (փոշեներկված էլեկտրաստատիկ դաշտում): Հարթակը 18 մմ հաստությամբ Egger H3331 ST10 կամ Egger H3303 ST10 (այլընտրանք) լամինատով: Մեկ նեղ ճակատից նախատեսված է միաշերտ մետաղական ներկված ցանց (2.5x5x1 մմ կամ 3x6x1 մմ): 4 հատ Siso 08.04.099 տեսակի անիվների վրա, որից 2 հատը արգելակով: Մանրամասները ըստ գծագրի"
6	Համակարգչի և փոքր տպիչի մոդուլ	"Համակարգչի և փոքր տպիչի մոդուլ 450(W)x650(D)x600(H) մմ: 20x20x2 մմ ուղղանկյուն մետաղական խողովակներով հիմնակմախքի գույնը՝ D1036 - RAL 9010 - Fine Texture Matt SAA10F կամ PULVER 09038.09010 (այլընտրանք)(փոշեներկված էլեկտրաստատիկ դաշտում): Հարթակները 18 մմ հաստությամբ Egger H3156 ST12 կամ Egger H3309 ST28 (այլընտրանք) լամինատով: Մեկ նեղ ճակատից նախատեսված է միաշերտ մետաղական ներկված ցանց (2.5x5x1 մմ կամ 3x6x1 մմ): 4 հատ Siso 08.04.099 տեսակի անիվների վրա, որից 2 հատը արգելակով: Մանրամասները ըստ գծագրի"
7	3 քաշովի դարակներով մոդուլ	3 քաշովի դարակներով մոդուլ 400(W)x530(D)x600(H) մմ: Աջ, ձախ, վերին ստորին արտաքին նիստերը 18 մմ հաստությամբ Egger W908 ST2 կամ Egger W1000 ST9 (այլընտրանք) լամինատով, իսկ դիմային և հետևի նիստերը Egger H3331 ST10 կամ Egger H3303 ST10 (այլընտրանք) լամինատով: Սողնակները՝ բարձրորակ, անիվային մեխանիզմով, BLUM կամ տեխնիկապես համարժեք ապրանքանիշ: Դարակների բռնակները վերադիր, կլոր հատվածքով, սահուն, անվնաս էրգոնիմիկ անցումներով, գաբարիտային երկարությունը՝ 156 մմ, կոդ՝ RQ104S.096BC99, Գույնը՝ սև, Վերջնամշակումը՝ խոզանակած պողպատ: 4 հատ Siso 08.04.099 տեսակի անիվների վրա, որից 2 հատը արգելակով: Մանրամասները ըստ գծագրի
8	Հագուստի պահարան	Հագուստի պահարան 1500(W)x450(D)x2100(H) մմ, 6 դռներով: Հիմնակմախքը, դռները և դարակները 18 մմ հաստությամբ Egger W908 ST2 կամ Egger W1000 ST9 (այլընտրանք) տեսակի լամինատով, իսկ դռները Egger H3331 ST10 կամ Egger H3303 ST10 (այլընտրանք) լամինատով: Բռնակները վերադիր, կլոր հատվածքով, սահուն, անվնաս էրգոնիմիկ անցումներով, գաբարիտային երկարությունը՝ 156 մմ, կոդ՝ RQ104S.096BC99, Գույնը՝ սև, Վերջնամշակումը՝ խոզանակած պողպատ: 8H100 տեսակի կարգավորվող պրիզմայաձև ոտքերով, անփայլ մետաղական կանգնակ + մոխրագույն պլաստիկ ոտնատակ: Հագուստի 5 կետային կախիչներով, կրկնակի կեռով: Մանրամասները ըստ գծագրի
9	2 քաշովի դարակներով մոդուլ՝ փաստաթղթերի պահարան	2 քաշովի դարակներով (ձախից), երկու դռնակով (աջից) և բաց դարակով (վերևում) փաստաթղթերի պահարան 1500(W)x450(D)x1100(H) մմ: Հիմնակմախքը և ներսի դարակները 18 մմ հաստությամբ Egger W908 ST2 կամ Egger W1000 ST9 (այլընտրանք) լամինատով, իսկ դիմային նիստերը Egger H3331 ST10 կամ Egger H3303 ST10: Սողնակները՝ բարձրորակ, անիվային մեխանիզմով, BLUM կամ տեխնիկապես համարժեք ապրանքանիշ: Բռնակները վերադիր, կլոր հատվածքով, սահուն, անվնաս էրգոնիմիկ անցումներով, գաբարիտային երկարությունը՝ 156 մմ, կոդ՝ RQ104S.096BC99, Գույնը՝ սև, Վերջնամշակումը՝ խոզանակած պողպատ: 8H100 տեսակի կարգավորվող պրիզմայաձև ոտքերով, անփայլ մետաղական կանգնակ + մոխրագույն պլաստիկ ոտնատակ: Մանրամասները ըստ գծագրի
10	Սեղան փաստաթղթերի լրացման համար	"Սեղան փաստաթղթերի լրացման համար: Չափը՝ 1600(L)x450(D)x1100(H) մմ: 60x20x2 մմ ուղղանկյուն մետաղական խողովակներով հիմնակմախքի գույնը՝ 1036 - RAL 9010 - Fine Texture Matt SAA10F կամ PULVER 09038.09010 (այլընտրանք)(փոշեներկված էլեկտրաստատիկ դաշտում): Սեղանաձածկը 18 մմ հաստությամբ Egger H3331 ST10 կամ Egger H3303 ST10 (այլընտրանք) լամինատով: Մանրամասները տես գծագրում: Ներառյալ տեղադրումը և բոլոր անհրաժեշտ նյութերը"

11	Սեղան	"Սեղանիկ 450(L)x850(D)x600(H) մմ: 60x20x2 մմ ուղղանկյուն մետաղական խողովակներով հիմնակմախքի գույնը՝ D1036 - RAL 9010 - Fine Texture Matt SAA10F կամ PULVER 09038.09010 (այլընտրանք), (փոշեներկված էլեկտրաստատիկ դաշտում): Սեղանածածկը և կողային ճակատները 18 մմ հաստությամբ Egger H1334 ST10 կամ Egger H3303 ST10 (այլընտրանք) լամինատով: Մանրամասները ըստ գծագրի"
12	Սպասարկողի աթոռ	Սպասարկողի աթոռ անիվներով (սև), բարձրորակ մեխանիզմով, բարձրության և մեջքի հենակի անկյան կարգավորմամբ: Նստատեղը՝ մոխրագույն կտորից, մեջքի հենակը՝ ցանցավոր, գույնը՝ կանաչ: Բազկաթևերի բարձրությունը կարգավորվող, նյութը՝ պլաստիկ, գույնը բաց բեժ և երկնագույն (միայն վերին նիստը): Անիվների հիմնակմախքը՝ մետաղական, գույնը՝ մոխրագույն: Դիզայնը ըստ նախագծում ներկայացված նկարի
13	Հաճախորդի աթոռ	Հաճախորդի աթոռ: Նստատեղի նյութը՝ պլաստիկ և արհեստական կաշի, գույնը՝ սպիտակ, ոտքերի նյութը՝ փայտ, գույնը՝ բաց երանգի: Մեջքի հենակը՝ խոշոր ցանցի տեսքով: Առանց բազկաթևերի: Դիզայնը ըստ նախագծում ներկայացված նկարի
14	Սպասասրահի և խորհրդատվական սեղանի աթոռ	Սպասասրահի և խորհրդատվական սեղանի աթոռ: Նստատեղի նյութը՝ պլաստիկ, գույնը՝ սպիտակ, ոտքերի նյութը՝ փայտ, գույնը՝ բաց երանգի: Բազկաթևերով: Դիզայնը ըստ նախագծում ներկայացված նկարի
15	Խորհրդատվական սեղան	Խորհրդատվական սեղան: Տրամագիծը՝ 840 մմ, բարձրությունը՝ 750 մմ: Սեղանածածկի նյութը՝ լամինատ Egger W908 ST2 կամ Egger W1000 ST9 (այլընտրանք): Հիմնակմախքի և ոտքերի նյութը՝ մետաղ, գույնը՝ 1036 - RAL 9010 - Fine Texture Matt SAA10F կամ PULVER 09038.09010 (այլընտրանք) (փոշեներկված էլեկտրաստատիկ դաշտում): Այլ մանրամասները ըստ նախագծի
